# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Փոքր Սասունցի 1

№ 4964-Ա « 09 » դեկտեմբերի 2025թ.

«ԵՐԵՎԱՆԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի հ.259-Ն որոշման հավելվածի 44-րդ կետի 4-րդ ենթակետը.

1. Աղբատար մեքենաների համար Երևան քաղաքի սեփականությունը համարվող շարժիչներն անհատույց օգտագործման իրավունքով հանձնել «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկին՝ համաձայն հ.1 հավելվածի:

2. Լիազորել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության պետին՝ Երևանի քաղաքապետի անունից, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի տնօրենի հետ կնքել գույքի անհատույց օգտագործման պայմանագիր:

3. Աղբատար մեքենաների շարժիչների հանձնման – ընդունման աշխատանքներն իրականացնելու համար ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հ.2 հավելվածի:

4. Հանձնարարել հանձնաժողովի նախագահին՝ սույն որոշման ընդունումից հետո իրականացնել գույքի հանձնման-ընդունման աշխատանքները:

5. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության պետի վրա:

6. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

**ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

Հավելված 1
Երևանի քաղաքապետի
2025թ. դեկտեմբերի 9 -ի
հ.4964-Ա որոշման

ՑԱՆԿ

«ԵՐԵՎԱՆԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՆՁՆՎՈՂ ԳՈՒՅՔԻ

| Մատակարար կազմակերպության անվանումը և ծածկագիրը | Քանակը /հատ/ | Արժեքը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 11.07.2024թ. կնքված ԵՔ-ՀՄԱՊՁԲ-24/4 | 3 հատ Gazon Next ավտոմեքենայի ЯМЗ-534 շարժիչ լրակազմով | Միավոր արժեքը՝ 6.500.000 Ընդամենը՝ 19.500.000 |
| 11.07.2024թ. կնքված ԵՔ-ՀՄԱՊՁԲ-24/2 | 3 հատ շարժիչ «Evro 3» 740.61 Bosh (6x4)՝ լրակազմով | Միավոր արժեքը՝ 10.594.950 Ընդամենը 31.784.850 |
| 11.07.2024թ. կնքված ԵՔ-ՀՄԱՊՁԲ-24/1 | 3 հատ շարժիչ «Cummins» ISB6.7E5 250 (SO75635) Epo-5 լրակազմով | Միավոր արժեքը՝ 9.500.000 Ընդամենը՝ 28.500.000 |

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝** **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

Հավելված 2
Երևանի քաղաքապետի
2025թ. դեկտեմբերի 9 -ի
հ. 4964-Ա որոշման

ԿԱԶՄ
«ԵՐԵՎԱՆԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՈՒՄ»
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ՀԱՆՁՆՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՀԱՆՁՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Հանձնաժողովի նախագահ

| | |
|---|---|
| Վ.Մարգարյան | Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության աղբահանության և սանմաքրման բաժնի գլխավոր մասնագետ |

Հանձնաժողովի անդամներ

| | |
|---|---|
| Հ. Ռամազյան | Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության աղբահանության և սանմաքրման բաժնի առաջին կարգի մասնագետ |
| Ա. Խուդոյան | Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների բաժնի առաջատար մասնագետ |
| Ս. Կատվալյան | «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի տնօրեն |

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝** **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**